<<ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ >>ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Առարկա՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Աիդա Դավթյան

ՈՒսումնական հաստատություն՝ *ՈՒՇԻԻ ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿՐԳ ԴՊՐՈՑ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 5

ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 9

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզվի ուսուցման հիմնական նպատակներից մեկը աշակերտի մեջ խոսքի մշակույթի զարգացումն է, քանի որ առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել երեխայի կրթությունն ու դաստիարակությունը: Աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի միջին դպրոցի դասընթացի հիմնական նպատակներից մեկն է: «Կարդալու և գրելու ուսուցումը, ճիշտ է, երեխայի մեջ գործնական ունակությունների զարգացման որոշակի նպատակ ունի, սակայն վերջին հաշվով դրանց ուսուցումը ևս բացարձակապես ինքնանպատակ չէ, դրանք ևս միջոց են խոսքի զարգացման խնդիրների իրականացման համար»[1]:

Դպրոցում լեզուն, մի կողմից, ուսուցանվում է որպես հատուկ առարկա՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքը, մյուս կողմից, նպաստում է այլ առարկաների ուսուցմանը: Գործնական նշանակությունից լեզուն աստիճանաբար անցնում է ավելի բարդ գործառույթի և, առհասարակ, հանդես է գալիս որպես տրամաբանության զարգացման միջոց: «Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը»[2]:

Աշակերտի խոսքի ձևավորումը՝ որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, դեռևս նախաայբբենական շրջանից սկսած, թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ և արժեք է ստանում: Հարկ է նկատել, որ մանկավարժներից շատերը, գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները կարևորելով, շեշտը դնում են ուսուցչի աշխատանքի, նրա կիրառած սկզբունքների և դասի կազմակերպման ձևերի վրա: Այս դեպքում որոշ չափով անտեսվում են աշակերտների անհատական ու խմբային գործունեությունը, դասարանային և

[1] Ա. Տեր-Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա. Տարրական դասարաններ, Երևան, 1974, էջ 7:
[2] Կ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 742:

արտադասարանային աշխատանքները, որոնք ևս կարող են նպաստել աշակերտների հաղորդակցական, համագործակցային կարողությունների, մասնավորապես կապակցված խոսքի զարգացմանը:

Թեմայի արդիականությունը: Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների ու իրականացման ուղիների քննությունը գրաճանաչության նախաայբբենական փուլում կարևոր նշանակություն ունի, քանի որ հնարավորություն է տալիս ժամանակակից մեթոդների դիտարկմամբ ուսումնասիրելու «Այբբենարանում» բառապաշարի համալրման, խոսքի զարգացման ուղղված առաջադրանքները, անցկացրած դասընթացների հիման վրա առաջարկելու խոսքի զարգացման արդյունավետ միջոցներ ու խաղեր: Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մեթոդների դիտարկմամբ փորձ է արվում բացահայտելու նախաայբբենական փուլի կազմակերպման առանձնահատկությունները առաջին դասարանում:

Ուսումնասիրության նպատակն է քննել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները:

Ուսումնասիրության խնդիրները: Գրաճանաչության շրջանում մայրենի լեզվի ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ փորձել ենք ուսումնասիրել աշակերտի խոսքի զարգացման գործընթացը, նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները: Այդ նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

ա. ներկայացնել գրաճանաչության նախաայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները,

բ. ուսումնասիրել և վերլուծել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները,

գ. ուսումնասիրել և վերլուծել նախաայբբենական փուլի իրականացման եղանակները,

դ. դիտարկել խաղը՝ որպես նախաայբբենական փուլի խոսքի զարգացման միջոց,

ե. վերլուծել խոսքի զարգացումը նախաայբբենական փուլում:

Ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: Մեր ուսումնասիրության առարկան նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիներն են, իսկ օբյեկտը՝ մայրենի լեզվի ուսուցման գործընթացը առաջին դասարանի նախաայբբենական փուլում:

Ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական արժեքը «Այբբենարանի»փաստական նյութի քննության հիման վրա նախաայբբենական փուլի կարևորումն է: Ուսումնասիրության արդյունքում կատարված մեկնաբանությունները, խոսքի զարգացման առաջարկող մեթոդները գործնական նշանակություն ունեն. կարող են օգտակար լինել մայրենի լեզվի ուսուցման հարցերով զբաղվող մասնագետների, մանկավարժների, ինչպես ուսանողներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.

ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշակերտի խոսքի զարգացումը լեզվի կենտրոնական հարցն է[3]: Խոսքի միջոցով աշակերտը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը:

Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6-7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիրակության խնդիրների ընդգրկումով: Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի և հայոց լեզվի գիտական հնչյունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝

[3] Ս. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978, էջ 55:

յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը:

Նախաայբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրներն են.

Կազմակերպչական խնդիրներ

- ✓ երեխաների ծանոթացում նրանց համար ուսումնական նոր գործունեությանը՝ ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ, աշակերտների ծանոթությունը միմյանց հետ, ծանոթություն կրթական հաստատության կարգուկանոնին, դպրոցական շենքին, երեխաների իրավունքներին և պարտականություններին, աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում ոտքի կանգնելու ունակությունների մշակում, ուսուցչին, ընկերներին բարձրաձայն պատասխանելու կարողության ձևավորում, ուսուցչի խոսքը հասկանալու, նրա հանձնարարությունները կատարելու ունակության զարգացում, ընկերներին, ուսուցիչներին և շրջապատի մարդկանց լսելու և արձագանքելու ունակության ձևավորում, գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում,
- ✓ հարմարեցում ուսումնական գործունեությանը և աշակերտի նոր սոցիալական դերին,

կրթադաստիարակչական խնդիրներ

- ✓ երեխաների պատրաստականության մակարդակի ուսումնասիրում և նրանց գրաճանաչության ճիշտ գործընթացի կազմակերպում,
- ✓ երեխաների կարդալու և գրելու գործընթացների ճիշտ կազմակերպում[4]:

Ուսուցիչը պետք է հստակ պատկերացնի վեց տարեկանների ուսուցման հիմնական խնդիրները, հասկանա առաջին դասարանում առաջարկվող մեթոդների մանկավարժական-հոգեբանական հիմնավորումը, իմանա ուսուցման այլ հնարներ, դրանց մեջ ընտրություն կատարելիս կարողանա հաշվի առնել դասարանի ու

[4] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 38-39, 40:

առանձին աշակերտների առանձնահատկությունները, ինչպես նաև սեփական ուժերն ու ընդունակությունները:

Ուսուցիչը պետք է իմանա.

- ✓ դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների առանձնահատկությունները,
- ✓ ուսուցման գործընթացում լուծվող խնդիրների կարևորությունը,
- ✓ դասարանի մանկավարժական բնութագիրը,
- ✓ ուսումնական նյութի բովանդակությունը,
- ✓ ուսուցման հնարներ և մեթոդներ,
- ✓ վեց տարեկանների տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները,
- ✓ աշակերտների անհատական առանձնահատկությունները[5]:

Աշակերտի խոսքի զարգացման խնդիրների լուծման համար կարևոր դեր են կատարում.

ա/ դասի նախապատրաստումն ուսուցչի կողմից,

բ/դասի կահավորումը,

գ/ տարբեր մեթոդների և հնարների կիրառումը:

Առաջին դասարանի աշակերտի խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված[6]: Իսկ դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա:

---

[5] Ջ. Գյուլամիրյան, Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում, Երևան, 1986, էջ 7:

[6] Ա. Տեր-Գրիգորյան, Գրաճանաչության մեթոդիկա, Երևան, 1968, էջ 94:

Նախաայբենական փուլի կազմակերպման հիմնական նպատակը երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ ներգրավվելը և կարդալ ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է: Այս շրջանի տևողությունը միշտ էլ տատանվել է. մինչև վերջերս՝ հնչյունային մեթոդի գործադրման ժամանակ, այն տևում էր 2-3 շաբաթ, հնչույթավանկային մեթոդի զործադրումով այդ ժամանակը կրճատվեց հասցվեց 1 - 1,5 շաբաթի, հնչույթաբառային մեթոդի գործադրման պայմաններում այն տևում է 3 - 4 շաբաթ և այլն: Տևողության այս տարբեր ժամկետների առկայությունը պայմանավորված է քաղաքային և գյուղական դպրոցների, մանկապարտեզներից ու ընտանիքներից դպրոց եկած երեխաների դպրոցի համար պատրաստված լինելու աստիճանի, բարբառային միջավայրի և երեխաների տարիքային տարբերություններով, որոնք որոշակիորեն ազդում են գրաճանաչության ուսուցման ճիշտ կազմակերպման ու դրա արդյունավետության վրա: Ընդ որում, նախապատրաստական շրջանի տևողությունը երբեմն կարող է որոշել դպրոցը՝ ելնելով տեղական պայմաններից և այդ ժամանակն ավելի նպատակահարմար օգտագործելու հնարավորություններից:

Նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է բոլոր դպրոցների ու բոլոր առաջին դասարանների համար, որովհետև հետագա աշխատանքի ամբողջ հաջողությունը մեծ չափով կախված է նաև աշակերտների դպրոցի համար լավ նախապատրաստված լինելուց, այն ինչ երեխաների մեծ մասն առայժմ դպրոց է գալիս չնախապատրաստված, ուստի այդ նախապատրաստությունը պետք է ստանա դպրոցում: Այդ նախապատրաստությունը պետք է կատարվի ժամանակակից մանկավարժական գիտությունների պահանջներին համապատասխան, որոշակի ծրագրով ու մեթոդներով, որպեսզի անհրաժեշտ արդյունք տա, նպաստի երեխայի մտավոր զարգացմանը, գրաճանաչության ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Այս շրջանի համար բնորոշ են հետևյալ հիմնական խնդիրները՝ աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին, երեխաների խոսքի զարգացումը, տեսողության, լսողության, կինեսթետիկ զգացողության և ուշադրության մշակումը, գրելու համար ձեռքի նախապատրաստումը, կարդալու սկզբնական կարողության ձևավորման հա-

մար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդումը, աշակերտների ուսումնասիրումը, դասարանական միասնական կոլեկտիվի ստեղծումը և այլն։ Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի վերցրած տարբեր տիպի պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս. հնարավոր չէ ասել, թե երբ է ավարտվում մեկը և երբ է սկսվում մյուսը, որովհետև դրանք խորապես միմյանց մեջ ներթափանցված, փոխադարձորեն միմյանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են։

ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Նախայբբենական շրջանում երեխան ճանաչում է բոլոր հնչյուններն ու դրանց տառերը, սովորում է դրանք ճիշտ արտաբերել, գրել ու կարդալ կամ՝ հնչյունները վերածել գրերի՝ գրել, գրերը վերածել հնչյունների՝ կարդալ՝ ինչպես առանձին ու անկախ վերցրած, այնպես էլ մյուս հնչյունների ու տառերի հետ ունեցած կապակցության մեջ։ Այս բարդ ու բազմակողմանի աշխատանքն ամբողջ նախայբբենական և այբբենական շրջանում նույնը չի մնում, ուսուցման տարբեր փուլերում նրա խնդիրներն ու նպատակները և դրանցով պայմանավորված նաև աշխատանքի կազմակերպման մեթոդական ձևերն ու եղանակները հետզհետե փոխվում են։ Երբ երեխաները նոր են սկսում սովորել հնչյուններն ու դրանց տառերը, հիմնականում հնչյունների ու տառերի ուսուցում է կատարվում, իսկ հետագայում դրան միանում է նաև բառեր կարդալու ուսուցումը, ավելի ուշ՝ բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված բնագրերի ընթերցումը, ուղղագրական ու ուղղախոսական պարզ կանոնների յուրացումը, լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդումը, դաստիարակչական համակողմանի աշխատանքը և այլն։ Այս ամենը, բնականաբար, բարդացնում ու բազմակողմանի են դարձնում գրաճանաչության ուսուցման աշխատանքը։ Ըստ աշխատանքի կազմակերպման այդ առանձնահատկությունների և ուսուցման խնդիրների՝ գրաճանաչության նախայբբենական շրջանը բաժանվում է երեք փուլերի։

Առաջին փուլում ուսուցանվում են գրության ու արտասանության տեսակետից ամենահեշտ ու ամենագործածական հնչյուններն ու դրանց տառերը (ա, ի, ու, տ, կ, ս, ր, ն, մ, շ, լ, պ)։ Այս փուլում երեխաներն էլ ավելի են վարժվում բառերի վանկային ու հնչյունային վերլուծություններ ու համադրություններ կատարելու մեջ, սովորում են բառեր կարդալ՝ կարդալու հիմքում ունենալով վանկերով կամ բառերով կարդալու սկզբունքը՝ նայած ինչ մեթոդով է կատարվում ուսուցումը։

Այս փուլում երեխաները սովորում են շարժական տառերով բառեր կազմել ու դրանք վանկերի բաժանել, կազմել դրանց գծային մոդելները։ Այս փուլի վերջում աշխատանք է տարվում բառակապակցությունների ու 2-4 բառերից կազմված նախադասությունների, 2-3 նախադասություններից կազմված պարզ բնագրերի ընթերցման շուրջ։

Երկրորդ փուլում գրելու աշխատանքներին զուգընթաց սովորում են նաև վայելչագրական մի շարք կանոններ՝ բառերը գրել միմյանցից ու տառի չափ հեռավորությամբ, նոր գրելիս սկսել մի քիչ խորքից. մարդկանց անուններն սկսել մեծատառով և այլն։

Երրորդ փուլում անցնում ենք արտասանության ու գրության տեսակետից բարդ և խոսքի մեջ համեմատաբար ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը՝ հետագայում կատարված մասնակի փոփոխություններով հանդերձ (ե, ո, և, թ, չ, ծ, ց, փ, ջ, ք, ճ, ֆ, ձ)։ Կարդալու համար առաջադրվում են տարբեր վանկային կառուցվածք ունեցող բառեր՝ հաճախ նաև բաղաձայնական կուտակումներով (սունկ, տունկ, տաշտ, դաշտ, սանր), կապակցված ամբողջական նյութեր՝ 4—5 բառից կազմված նախադասություններով։

Բառի մեջ առանձին հնչյունը երեխաների համար լսելի դարձնելու նպատակով որոշակի աշխատանք պետք է տանել ինչպես նախապատրաստական, այնպես էլ նախաայբբենական փուլում։ Եթե նախապատրաստական շրջանում երեխաները վարժվում են առանձին հնչյունները լսելու և դրանք միմյանցից տարբերելու մեջ, ապա գրաճանաչության շրջանում յուրաքանչյուր առանձին հնչյուն, որը նոր ու անծանոթ է նրանց համար, սովորում են անջատել ծանոթ ու անծանոթ հնչյունների հնչյունախմբից։

Հնչյունի ուսումնասիրման, ճանաչման ու գիտակցման համար ելակետային նշանակություն ունի հնչյունի անջատումը կենդանի խոսքից կամ բառից, որտեղ հնչյունը հանդես է գալիս բնական վիճակում՝ մյուս հնչյունների հետ ունեցած սերտ կապակցության մեջ, որն սկզբնական շրջանում շատ է դժվարացնում նրա, որպես լեզվական առանձին միավորի, գիտակցումը։ Գրաճանաչության ուսուցման ամենադժվարին և միաժամանակ ամենակարևոր ու պատասխանատու աշխատանքը նոր սովորելիք հնչյունի անջատումն է բառից, որը կարող է իրականացվել մի շարք ձևերով՝ նայած հնչյունի բնույթին և աշակերտների ըմբռնման մակարդակին։ Անծանոթ հնչյունի անջատման ամենատարածված ձևը բառի տարրալուծումն է վանկերի ու հնչյունների։ Բառը աշակերտների միջոցով վանկերի բաժանելուց և վանկ առ վանկ մի քանի անգամ արտասանել տալուց հետո հետագա վերլուծության համար վերցվում է այն վանկը, որի մեջ գտնվում է անծանոթ հնչյունը։ Կարելի է վերլուծությունն սկսել նաև այն վանկից, որի մեջ բոլոր հնչյունները երեխաներին ծանոթ են, և ապա նոր անցնել մյուս վանկին, որի մեջ գտնվում է նոր հնչյունը։ Աստիճանաբար անջատել ենք տալիս այն հնչյունները, որոնք արդեն ծանոթ են աշակերտներին, որով դրանք վերստին վերհիշվում ու ամրապնդվում են, մինչև որ մնամ է միայն անծանոթ հնչյունը. դրանով անծանոթ հնչյունն անջատվում է բառից։

Հատուկ աշխատանք պետք է տանել յուրացված հնչյունի ամրապնդման ուղղությամբ. երեխաները պետք է սովորեն այն ճիշտ լսել բառասկզբում, բառամիջում ու բառավերջում, տարբեր հնչյունների հետ ունեցած վանկային կապակցություններում, բաց ու փակ վանկերում և այլն։ Այս նպատակով մի շարք վարժություններ են մշակված, որոնք օգնում են հնչյունի հստակ ու խորը յուրացմանը։ Այսպես օրինակ, ա) ուսուցիչն ասում է մի շարք բառեր, որոնց թվում և այնպիսիները, որոնց մեջ կա նոր հնչյունը. աշակերտները պետք է գտնեն այդ բառերը, ցույց տան, թե նոր հնչյունը որտեղ է հնչում։ բ) Ուսուցիչը կարդում կամ թվում է բառեր, իսկ աշակերտները լսում են և ձեռք բարձրացնում այն ժամանակ, երբ լսում են նոր հնչյունը պարունակով բառը։ Այսպիսի վարժությունները նպաստում են նոր ուսուցված հնչյունի գիտակցմանն ու մտապահմանը։

Կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երեք փուլերով՝ վերլուծում, համադրում և ավտոմատացում։

Վերլուծական շրջանում կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երկու ձևով՝ տառերի ճանաչումով և վանկերի ու բառերի մեջ դրանց հնչյունների միավորումով: Երեխայի մեջ տեղի ունեցող հոգեբանական այս երկու գործողություններն ըստ ժամանակի չեն համընկնում միմյանց հետ և առանձնահատկություններով էլ տարբերվում են միմյանցից: Այս առումով վերլուծական շրջանն իր հերթին բաժանվում է երկու աստիճանի՝ ա) տառերի ճանաչում և դրանց համապատասխան հնչյունների հետ կապակցում կամ սովորած հնչյուն-տառերի զուգորդում և բ) վանկային վերլուծություն ու ընթերցում:

Նախաայբբենական փուլում խոսքի զարգացման արդյունավետ եղանակ է գրական ունկնդրումը[7]: Առաջին դասարանում գրական ունկնդրման նյութ կարող են դառնալ հեքիաթը, բանաստեղծությունը և այլն: Օրինակ՝ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսելու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթրցումն ու այն դարձնում ցանկալի: Ունկնդրումը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ունկնդրումը ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

«Այբբենարանում» տրված նկարների, առանձին բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված նյութերի, դրանց շուրջ անցկացվող զրույցների, բացատրությունների, էքսկուրսիաների, առարկայական դասերի, բնության դիտումների, ուսուցման տեխնիկական միջոցների, զննական նյութերի և այլ միջոցներով երեխաներին տարրական տեղեկություններ ենք տալիս շրջապատի աշխարհի, մարդկանց աշխատանքի և այլ հարցերի վերաբերյալ: «Վեց տարեկանների ուսուցման պրոցեսում որոշակի տեղ է

[7]Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 41:

տրվում նկարներին: Նկարը ուսուցչին հնարավորություն է տալիս ընկալելի դարձնել այն առարկաներն ու երևույթները, որոնք միշտ չէ, որ հնարավոր է կամ անհրաժեշտ բնական վիճակում ցուցադրել: Ուսուցիչը նկարով հնարավորություն է ունենում երեխայի մեջ ստեղծել ուսումնասիրվող երևույթների և առարկաների համապատասխան մտապատկերներ»[8]:

Ջ. Գյուլամիրյանը նախապայբբենական փուլում կապակցված խոսքի զարգացման համար առաջարկում է մեթոդական հետևյալ հնարները՝ պատմություն նկարի շուրջ, գեղարվեստական բնագրերից սովորած պատկերավոր արտահայտությունների կիրառություն սեփական խոսքում: Բանավոր խոսքի զարգացման ավանդական մեթոդների շարքում նշվում են նաև զննական, խոսքային և գործնական մեթոդները: Խոսվում է նաև վերարտադրողական, ստեղծագործական մեթոդների մասին[9]: Որպես բանավոր խոսքի զարգացման արդյունավետ մեթոդներ՝ դիտարկվում են դերային խաղերը, ստեղծագործական օրագրի վարումը, բանավեճերն ու հարցազրույցները, նաև փոքր խմբերով աշխատանքը:

Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումը և պատմումը, տարաբնույթ նյութերի անգիր ուսուցումը: Այս առումով մեծ դեր է կատարում հատկապես ընթերցանությունը, որը ոչ միայն նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը, այլև ճանաչողական գիտելիքների հարստացմանն ու աշակերտների դաստիարակությանը[10]:

Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծումը, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրումը: Բնագրին ուղեկցող նկարի պատմումը կարելի է իրականացնել մեթոդական հետևյալ շղթայով.

ա) նկարի քննարկում աշակերտների հետ,

բ) համապատասխան բառապաշարի քննարկում, հենակետային բառերի որոշում,

---

[8] Ջ. Գյուլամիրյան, Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում, էջ 29:

[9] Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009, էջ 275, նույնի՝ Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում, էջ 21:

[10] Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, էջ 142-145:

գ) բնագրի բանավոր շարադրում (բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությամբ),

դ) բառային աշխատանք (ուղղագրական և իմաստային արժեքների դիտարկում):

Նկարը վերարտադրելիս տեքստը պետք է հատվածաբար աշակերտների պատմել տալ, առավել ևս նրանց հարցեր տալ, ինչպես նաև օգնող բացատրություններ: Որքան էլ որ նկարը վերարտադրելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները տեքստը պատմելիս պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք աշակերտներն հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և աշակերտների խոսքը հարստանա դրանցով:

Գրաճանաչության շրջանում առանձնահատուկ արժեք են ստանում խաղային իրավիճակները, քանի որ խաղային իրավիճակում ազատ, անկախ գործող երեխան օգտագործում է իր բոլոր հնարավորությունները, ունեցած տեղեկատվությունը: Միաժամանակ դրանք փոխանցում է ընկերներին և յուրացնում նրանցը: Երեխաներին շատ է ոգևորում խաղային իրավիճակների ստեղծումը, որը նրանք ինքնակազմակերպման, ինքնաարտահայտման և անհատականության դրսևորման հնարավորություն է տալիս: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ[11]:

Դիտարկենք նախաայբբենական երաշխավորվող խաղերի օրինակներ:

ԽԱՂ 1

Այն ո՞վ է կանչում

Խաղի նպատակները. զարգացնում է երեխաների լսողությունը, ուշիմությունը, կատարելագործում է ունկնդրելու կարողությունը, ծանոթացնում է տարբեր բնաձայներին:

Ընթացքը. աշակերտներից մեկը հրավիրվում է գրատախտակի մոտ: Նա կանգնում է մեջքով դեպի դասարանը: Ուսուցչուհին հերթով մոտենում է երեխաներին և շշնջում, թե ինչ միջատի, թռչնի, կենդանու ձայն պիտի հանի տվյալ

[11] Լ. Սմբատյան, Խաղային իրավիճակների օգտագործումը նախադպրոցական մանկավարժության մեջ // «Նախաշավիղ», Երևան, 2010, N 5, էջ 37:

երեխան: Երեխաներն առանձին -առանձին ձայն են տալիս՝ կու-կու, բըզզ, կվա-կվա, կըռ և այլն:

Գրատախտակի առջև կանգնած երեխան ոչ միայն պիտի ասի, թե բնության մեջ որ կենդանին է այդ ձայնը հանում, այլև որ երեխան է կանչողը: Սխալվող երեխան կա՛մ պիտի երգի, կա՛մ արտասանի, կա՛մ հանելուկ ասի և այլն:

ԽԱՂ 2

ԲԱՌԱՇՂԹԱ

Խաղի նպատակները. զարգացնում է երեխաների հնչյունային լսողությունը, բառը վերլուծելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը, ձևավորում է համեմատելու, հակադրելու, համադրելու կարողություններ:

Անհրաժեշտ պարագաներ. տարբեր առարկաների փոքրաձավալ նկարներ:

Խաղի ընթացքը. դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի առջև լցված են առարկայական նկարներ:

Առաջադրանքը. ընտրել և իրար կողքի հաջորդաբար դասավորել նկարներն այնպես, որ մի նկարում պատկերված առարկայի անվան վերջին տառով սկսվի հաջորդ նկարում պատկերված առարկայի անունը:

ԽԱՂ 3

ԳՏԻ՛Ր ՍԽԱԼԸ

Խաղի նպատակները. սովորեցնել երեխաներին տարբերել հնչյունները (ձայնավոր, բաղաձայն), զարգացնել բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողությունը, ձևավորել բառի վանկահնչյունային կառուցվածքը գծապատկերի մջոցով ճանաչելու ունակություն, զարգացնել երեխաների ուշիմությունը:

Անհրաժեշտ պարագաներ. առարկայական նկարներ, որոնց հետևում մատիտով տրված են նկարներում պատկերված առարկաների անվանումների գծապատկերները: Գծապատկերներից մի քանիսը սխալ է գծված:

Առաջադրանքը. դիտել նկարները, որոշել համապատասխան գծապատկերները, գտնել գծապատկերների սխալները , ուղղել և այլն:

Հարկավոր է թողնել, որ բոլոր աշակերտները կազմեն հանելուկի պատասխան բառը, նոր երեպաներին կարդալ հարցնել:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

(դասի օրինակով)

Դասարանը՝ առաջին դասարան

Առարկան՝ Այբբենարան

Դասի թեման՝ *Օ (Ո) հնչյուն-տառի ամրապնդում*

Դասի տիպը՝ *Ամրապնդման դաս*

Դասի տևողությունը՝ *1 դասաժամ*

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի նպատակները

- ✓ Հարցնել նախորդ դասը, կատարել հարցադրումներ սովորողների գիտելիքների ստուգման նպատակով:
- ✓ Օ հնչյունի ընկալում, տեղի որոշում բառի մեջ:
- ✓ Տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները:
- ✓ Սովորողների մոտ զարգացնել նյութը վերլուծելու և վերարտադրելու ունակությունները:
- ✓ Վերլուծել ընթերցված տեքստը և բացատրել նոր բառերի և բառակապակցությունների նշանակությունը:
- ✓ Նախորդ կետով կատարված գործողությունների ամրապնդման նպատակով տրված բառերով կազմել նախադասություններ:

Դասի խնդիրները

- ✓ Ամրապնդել պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին ունեցած գիտելիքները և կարողանալ այդ եզրույթներն օգտագործել խոսքում:
- ✓ Նախադասություններ կազմելու կարողությունների զարգացում:
- ✓ Վարժ և առոգանությամբ ընթերցելու կարողությունների զարգացում:
- ✓ Տառերի միջոցով կառուցել պարզ գծապատկերներ:
- ✓ Կարդալ տեքստը՝ ուշադրություն դարձնելով նկարներին:
- ✓ Լսել և արտահայտել մտքերը, կազմել նախադասություններ:

Դասի մեթոդները

Խմբային - համագործակցային, ինչպես նաև ուսուցման ակտիվ կամ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների և հնարների (մտագրոհ, մտքի քարտեզ,

պրոբլեմային հարց, խմբային աշխատանք քարտերով, 5-րոպեանոց շարադրություն, հարցման հետազոտական աղյուսակ) կիրառում:

Կահավորում՝նկարներ, պաստառներ, քարտեր, բառերի աղյուսակներ:

Դասի ընթացքը

Կազմակերպման փուլ (2 – 3 րոպե)

Դասի կառավարում, անհրաժեշտ պարագաների պատրաստում, նախապատրաստական զրույց:

Դասի սկիզբը տրվում է ԽԻԿ համակարգին համապատասխան:

1.Խթանման փուլ (4 – 6 րոպե)

ա. Խոսում ենք օրվա դասի թեմայի մասին և առաջադրում նպատակները: Հարցադրումների միջոցով ստուգում ենք սովորողների լեզվական գիտելիքները: Այնուհետև անցում ենք կատարում բառերի ընթերցմանը, որն աշակերտները կատարում են միմյանց շարունակելով:

Կիրառում ենք մտագրոհ մեթոդը և հաղորդում նոր նյութը: Սովորողները տալիս են դասի նյութի հակիրճ բնութագիրը՝ օգտագործելով սեփական մտքերը: մտքերի քարտեզագրում մեթոդի օգնությամբ սովորողները կազմում են նոր բառակապացություններ, ինչպես գրքում է նշված: Այսպես՝

77-րդ էջը սկսվում է նույնարմատով կազմված բառերով՝

որս որոշ

որսկան անորոշ:

Այնուհետև խաղող բառի միջոցով կազմվում են կապակցություններ՝

խաղողի –վազ

խաղողի –ողկույզ:

Օրինակ՝ հաջորդ առաջադրանքում մեկ տառի փոփոխությամբ կազմվում են նոր բառեր: Այսպես՝



Աշակերտները, բացի բառեր կազմելուց, պետք է ցույց տան ձայնավորները, ստուգեն տառերի ճանաչումը: Հնչյունի ու նրա տառերի լրիվ յուրացման համար կարևոր նշանակություն ունի դրանց հաճախակի կրկնությունը հետագա նյութերում, որպեսզի արդեն ուսուցված հնչյունի ու նրա տառերի յուրացումը կայունանա, ամուր զուգորդումներ ստեղծվեն, որպեսզի դրանք նոր կապակցությունների մեջ մտնեն ուսուցվող և արդեն ուսուցված հնչյունների ու դրանց տառերի հետ:

Բառի մեջ առանձին հնչյունը երեխաների համար լսելի դարձնելու նպատակով որոշակի աշխատանք ենք տանում ինչպես նախապատրաստական, այնպես էլ գրաճանաչության շրջանում: Եթե նախապատրաստական շրջանում երեխաները վարժվում են առանձին հնչյունները լսելու և դրանք միմյանցից տարբերելու մեջ, ապա գրաճանաչության շրջանում յուրաքանչյուր առանձին հնչյուն, որը նոր ու անծանոթ է նրանց համար, սովորում են անջատել ծանոթ ու անծանոթ հնչյունների հնչյունախմբից:

Աշակերտները կատարում են հնչյունային վերլուծություն: Գունային երանգով առանձնացնում են ձայնավորները: Նրանց ուշադրությունը բևեռում ենք նաև ով բառում ո-ի գրության ու արտասանության վրա:

Երբ աշակերտների մեջ ձևավորվում են նոր տառը բառի մեջ ճանաչելու, մնացած տառերի հետ ձուլելու և կարդալու կարողությունները, երեխաները կարդում են բառերով, որոնք ունեն վանկային կորեր: Այդ եղանակով կարդալիս աշակերտները բառի մեջ տեսնում են դրանք, մտովի վերածում բառի վանկային կառույցը և սովորում

են կարդալ՝ հիմք ընդունելով վանկը: Հետագայում՝ մեկ տասնյակ հնչյուն-տառերի յուրացումից հետո, երեխաները սկսում են բառերով կարդալ, ամրապնդել սովորածը: Վերոնշյալ մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս կարդալու միավոր է ընտրվում բառը՝ առանց բառապատկերի քայքայման: Անհրաժեշտության դեպքում բառի բաղադրիչները ներկայացվում են պայմանական նշանի՝ կորագծի միջոցով:

Դ Ա Դ Ա Ր Ի Պ Ա Հ՝ ՄԱՐՄՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԵՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Վերոշարադրյալ գործողությունների կատարմանը հաջորդում է խմբային աշխատանքը: Աշխատանք նկար-պատմության շուրջ: Աշակերտները փորձում են պատմել նկարի բովանդակությունը /նկարում պատկերված է բնության տեսարան, տատիկին օգնող թոռնիկներ, խաղողի ողկույզ և այլն/: Պատմությունը ամբողջացնելուց հետո աշակերտներն արտասանում են նախորդ դասերի ընթացքում սովորած բառերը: Լեզվական փորձառության մոտեցում մեթոդով նախօրոք ուսուցանել ենք ո-ով սկսվող, ինչպես նաև նշված տառը ներառող մի շարք բառեր՝ ոզնի, ոսկի, ողկույզ և այլն:

Աշակերտների՝ նկարի շուրջ հյուսած պատմությունները լսելուց հետո անցում է կատարվում ներքոհիշյալ ընթերցմանը: Ինչպես նկատում ենք, աշակերտները նախ կազմում են բառեր, այնուհետև բառակապակցություններ և միայն դրանից հետո՝ նախադասություններ: Այսինքն՝ տառի ամրապնդման դասում կիրառվում է ուսուցման աստիճանական սկզբունք:

Ոսկեվազում

Ոսկեվազը հայտնի է իր անուշահամ խաղողով:

Ոսկանն ու Ոսկեհատը պապիկի հետ խնամում են խաղողի վազերը: Իսկ աշնանը խաղողի ողկույզները շողշողում ու ժպտում են նրանց:

Տատիկը ողկույզները կախում է սառը մառանում:

Խմբային աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուր խմբի անդամներից մեկը ներկայացնում է իրենց արդյունքը: Ապա կատարվում է ընդհանուր քննարկում: Քննարկումից հետո խմբերը չեն ցրվում, այլ՝ քառաբաժան՝ մեթոդի կիրառման միջոցով ամփոփվում է ողջ ընթացքը: Խմբերին բաժանվում են թղթեր հետևյալ բովանդակությամբ՝

1.Ի՞նչ տեսա,

2.Ի՞նչն ինձ գրավեց,

3.Ի՞նչ կանեի

4.Ի՞նչ լսեցի

5.Ի՞նչ զգացի

6.Ինչպե՞ս կվերնագրեի այն:

Դասն ավարտվում է շուտասելուկի ուսուցմամբ: Աշակերտները մի քանի անգամ կարդում ու անգիր են սովորում շուտասելուկը, ինչը նպաստում է նրանց կապակցված խոսք կազմելու ունակություններին:

Գրավոր ժամին կատարվում են տետրում տրված առաջադրանքները:

Կարելի է գրել նաև մի քանի բառերից կազմված թելադրություն՝ կազմված ողկույզ, խաղող, Ոսկեհատ, Ոսկան և այլ բառերով:

Կշռադատման փուլ (4 – 6 րոպե)

Խմբային աշխատանքների ավարտից հետո աշակերտները տալիս են ամփոփ բնութագիր հայրենասիրության վերաբերյալ, ներկայացնում են ընթերցվածի հակիրճ բնութագիրը: Աշակերտներին հանձնարարվում է մեկ բառով տալ «հայրենասիրությունե բառի ամբողջական բնութագիրը:

Գնահատում և անդրադարձ (2 -3 րոպե):

Տալիս ենք հարցեր, որոնց արդյունքում պարզում է դասի թերություններն ու առավելությունները: Ստուգման նպատակով աշակերտներին ենք բաժանում նախորոք կազմած հարցաշար, որը հարցերի հետ պարունակում է նաև տարբերակներով պատասխանների բաժին: Աշակերտներին մի քանի րոպե ժամանակ է տրվում հարցերին պատասխանելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների ու իրականացման ուղիների քննությունը բերում է հետևյալ եզրակացություններին.

1. Անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում խոսքի զարգացումը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից գրաճանաչության նախաայբբենական փուլում օգտակար են նկարների շուրջ տարվող աշխատանքները, պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Առաջին դասարանում աշակերտի խոսքի զարգացման հիմնական միջոցը նկարներն են: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:
2. Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցներից մեկը, որը չպետք է անտեսել: «Այբբենարանի» դասերին կիրառվող դիդակտիկ խաղերը ոչ միայն գիտելիքների ապահովման միջոց են, այլև կարևոր դեր ունեն երեխաների մտածողության զարգացման գործում: Հատկապես համագործակցային մեթոդով անցկացվող խաղերը աշակերտներին մղում են ինքնաճանաչման, համակողմանի զարգացման՝ դասընկերների հետ շփման դաշտ ստեղծելով:

3. Նախաայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝ հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների, մասնավորապես ուշադրության, մտածողության և հիշողության առանձնահատկությունները: Աշխատանքը դասի ընթացքում կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու նկարների շուրջ պատմություններն ավարտվեն աշակերտների ակտիվ գործունեությամբ, այդ թվում՝ ֆիզիկական վարժություններով:
4. Հետազոտությունը դասի օրինակով ցույց տվեց, որ նախաայբբենական փուլի իրականացման համար շատ օգտակար կարող են լինել ակտիվ-երկկողմյան զրույցները, բանավոր պատմումներն ու ընթերցումները, նկարների օգտագործումը: Աշակերտի բառապաշարն իր հիմնական մասով համընկնում է գրական հայերենի համապատասխան բառամթերքի հետ, տարբերությունը միայն արտասանության ու շեշտադրության մեջ է: Նախաայբբենական փուլում երեխաների առջև ծառացած ամենահիմնական խնդիրը բառի հնչյունային վերլուծությունը և յուրաքանչյուր հնչյուն իր համապատասխան տառի հետ կապելն է, աչքի առջև տառեր ունենալով դրանց հնչյունները հիշելն ու արտաբերելը, վանկի ու բառի մեջ դրանք միավորելն ու արտաբերելը՝ որպես արտասանական միաձույլ ամբողջություն: Հնչյունի ու նրա տառերի լրիվ յուրացման համար կարևոր նշանակություն ունի դրանց հաճախակի կրկնությունը հետագա նյութերում, որպեսզի արդեն ուսուցված հնչյունի ու նրա տառերի յուրացումը կայունանա, ամուր զուգորդումներ ստեղծվեն, որպեսզի դրանք նոր կապակցությունների մեջ մտնեն ուսուցվող և արդեն ուսուցված հնչյունների ու դրանց տառերի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:
3. Գյուլամիրյան Ջ., Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում, Երևան, 1986:
4. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978:
5. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // Նախաշավիղ, Երևան, 2010, N6:
6. Ուշինսկի Կ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950:
7. Սարգսյան Վ., Այբբենարան, Երևան, 2010:
8. Սմբատյան Լ., Խաղային իրավիճակների օգտագործումը նախադպրոցական մանկավարժության մեջ // «Նախաշավիղ», Երևան, 2010, N 5:
9. Տեր-Գրիգորյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա. Տարրական դասարաններ, Երևան, 1974: